




ԲՈԼՈՐ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՄԱՅՐԸ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ Է ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ

3-4(1211-1212) 2019

Հրատարակության
55-րդ տարի

ԱՍՏՂԱԲՈՒՅԼ



Աշխարհում մեծագույն բանը
ինքն իրեն ճանաչելն է:

Միշտ էլ դու ՄՈՆՏԵՆ

ՕՂ ԱԿԱՆՋՆԵՐԻՍ

Ինքզինքդ
ճանաչելու
համար՝ ճանաչիր
պատմությունը:
Օգյուստ ԿՈՆՏ

ԿԱՅՈՒՆ ՀԱՐԹԱԿ՝ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ԳԻՏԵԼԻՔ, ՓՈՐՁ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ. ԱՅՍ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է
ԲՆՈՐՈՇԵՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ**



ՀԱՄԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Հարությունյանը փետրվարի 28-ին հանդիպում ունեցավ պրոֆեսորադասախոսական կազմի եւ ուսանողության հետ: Բանախոսությունը նվիրված էր ՀՀ արտաքին տնտեսական կապերի վերլուծությանը, հիմնական շեշտադրումը վերջին հինգ տարվա արդյունքների դիտարկումն էր: Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ. Էդուարդ Ղազարյանը ողջունելով ներկաներին շեշտեց, թե ավանդույթ կա՝ „դրսից“, մասնագետներ հրավիրելու քննարկումներ կազմակերպելու, իսկ այսօր մեր լավագույն մասնագետներից մեկին լսելու հնարավորություն ունենք:

Այն, որ բանախոսը հրաշալի է տիրապետում նյութին ակնհայտ էր հենց առաջին րոպեներից: Ուսումնառությունն Արեւմտյան լավագույն բուհերում, տարիների աշխատանքը կառավարությունում ստեղծել են իմացության ու փորձառության ամուր հիմքեր: Պատահական չէ, որ սկզբում ճշգրտվեցին եզրույթները, որոնք էական տարբերություններ ունենալով հանդերձ, հաճախ շփոթվում են, կամ նույնացվում: Պարենային անվտանգություն, հասանելիություն, ապահովվածություն...սրանք զգայուն բնորոշումներ են եւ պետք է ճշգրտորեն կիրառվեն:

Ճկուն արտաքին տնտեսական քաղաքականություն, Եւրասիական միության եւ արեւմուտքի հետ պայմանավորվածությունների ընձեռած հնարավորությունների լայն օգտագործում, այլ երկրների հաջողած փորձի ուսումնասիրություն, սրանք ճանապարհներ են, որոնք կարող են մեր երկրում տնտեսական ճնշարիտ հաջողություններ գրանցել:

ԼԵՋՈՒ ԵՒ ՄՀԱԿՈՒՅԹ
Ցանկացած տնտեսական, առեւտրային շփումներ սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղյակ լինել այդ երկրի լեզվի, մշակույթի, սովորույթների մասին: Իսկ մենք, հաճախ, անգամ Ռուսաստանի հետ չենք կարողանում „գրագետ“, ու իրազեկ կազմակերպել, կառուցել հարաբերությունները:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է „ՎԵՐԱԴԱՌՆԱ,, ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ինչպես նախկինում էր: Եւ ֆերմերային տնտեսություններում-դաշտում ծագած ցանկացած խնդիր պետք է „գա,, համալսարան, մասնագետների կողմից դիտարկվի, լուծում առաջարկվի ու կիրառվի-ներդրվի արտադրության մեջ: Կրթություն-գիտություն-արտադրություն եռամիասնությունը պետք է գործի անխափան: Սա անհրաժեշտ է բոլոր կաղմերի համար:

Գիտություն+նորարարություն+խորհրդատվություն՝ սա է ագրարային ոլորտում հաջողության բանաձեւը:

ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՔՎՈՏԱՆԵՐ ԱԳՐԱՐԱՅԻՆԻ ՀԱՄԱՐ

Պարոն Հարությունյանը „Իմ քայլը,, հիմնադրամի տնօրինության հետ դիտարկում է կրթաթոշակների ցանկում ՀԱՄԱՀ-ին կայուն քվոտաներ հատկացնելու հարցը: Արդեն հստակեցվում են մասնագիտություններն ու համալսարանները, որոնց կտրվեն առաջնահերթություններ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԿՈ ԵՒ ԱԳՐՈ ԲԱՆԱԴՐԻԻՉՆԵՐԸ ԳԱՅԹԱԿՐԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ

Լեռնային որեւէ բնակավայրում փողք, հարմարավետ օթեանները, առողջարար ու համեղ գյուղմթերքը, պատմական հուշարձանների առկայությունը „կանչող,, ու գրավիչ կարող են լինել օտարների համար: Եւ առանձնապես մեծ ներդրումներ էլ չեն պահանջվի:

Ենթավերնագրերը հուշում են, որ դրանցից յուրաքանչյուրին մի առանձին հանդիպում-բանախոսություն կարելի էր նվիրել: Եւ մտքերի փոխանակության ժամանակ բոլորն էլ գրեթե նույնն էին պնդում: Այս նախաձեռնությունը ցանկալի է, որ լինի պարբերական: Ի վերջո, ներկաների համար ավելի քան տեսանելի էր, ձեւավորվել է կայուն հարթակ մասնագիտական խնդիրների համակողմանի քննարկման-դիտարկման համար: Պարոն Հարությունյանը համամիտ էր: Ուրմեն, հուսանք, որ այն կլինի շարունակական:



ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԱՆԱԶ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԾԱԳՈՒՅՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ

Փետրվարի 27-ին ՀԱԱԶ-ում հյուրընկալել էինք Երեանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության պետ Խաչատուր Հակոբյանին։ Դիմելով ներկաներին նա ասաց. „Ուրախ եմ այսօրվա երկխոսության հնարավորության համար։ Մեծ պատիվ է լինել այս լսարանում, որտեղ իմ դասախոսներն են, ուսանողական ընկերները, գործընկերները„։

Տասնամյակներ շարունակ մայրաքաղաքի բնապահպանության պատասխանատուները հիմնականում իրականացրել են կանաչապատման աշխատանքներ։ Այն էլ, երբեմն ոչ հետեւողական, ոչ պատշաճ մակարդակով, անգամ կասեի՝ սրտացավության պակաս կար։ Ի վերջո, չաբաթօրյակից չաբաթօրյակ մի քանի հարյուր վոիտ տնկիով ոչինչ չես փոխի։ Ավելին, հաճախ բնապահպանությունը ստորադասվել, „զոհաբերվել“, է քաղաքաշինական հետաքրքրություններին։ Կանաչապատման պատասխանատուները տարիներ շարունակ, ավելորդ աղմուկից ու դժգոհություններից վախենալով, խուսափել են սանիտարական հատումներից, կանոնավոր էտից։ Եւ այսօր, Երեանի ծառերը ծերացած են, հիվանդ, թույլ, անուժ։ Այս բոլոր բացթողումների, վրիպակների արդյունքներն ամփոփյո են, մտահոգող։ Մայրաքաղաքում մեկ շնչին բաժին է հասնում 7.8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՌԽՍՆԵՆՈՒ ԿԱՐԴՏՈՎ ՀԱՄԱԿԱՄԾ

Իսկապես հետաքրքիր ու կարոտախտային շրջան էր անգլերենի դասընթացներին մասնակցությունս։ Երբ առաջացած տարիքում միտղ եմ գալիս աշակերտական վատ սովորություններդ, գլուխ պահելու եւ արդարացումներ գտնելու զավեշտալի հմուտյուններդ, խոստումներդ, թե հաջորդ դասին ավելի լավ կպատրաստվես…

Կարոտախտ է ու շատ թանկ զգացողություն, երբ 1000 տարվա գործընկերներդ հանկարծ դառնում են համադասարանցի՝ ստուգողականները, տնային առաջադրանքները կատարել-չկատարել-արտագրելու կուռ միասնականությամբ, իրար աջակցող, հարազատ, հավատարիմ…

Փետրվարի 21-ին 137 աշխատակից ստացավ անգլերենի երկամսյա առաջին դասընթացը ավարտելու եւ փուլը հաղթահարելու հավաստագիր։ ՀԱԱԶ ռաումնական

հարցերով պրոռեկտոր Ռոբերտ Մակարյանը եւ լեզվի կենտրոնի տնօրեն Ռուզաննա Շահինյանը շնորհավորեցին եւ մաղթեցին, որ հաջորդ փուլը ես պատվով ավարտեն։

Եթե մեկնարկի ժամանակ կար չորս մակարդակ՝ նախնական՝ ա. եւ ք., նախամիջին եւ միջին, ապա այժմ ունեք նաեւ բարձր մակարդակի խումբ, որոնց էլ փորձելու են հասնել սանդղակով ցածրեր։ Շնորհակալություն ՀԱԱԶ ղեկավարությանը՝ աշխատակիցների համար անգլերենի դասընթացներ կազմակերպելու մտքի եւ իրականացման համար, շնորհակալություն լեզվի կենտրոնի տնօրեն Ռուզաննա Շահինյանին եւ համբերատար ուսուցչներին՝ Կաչազան Գրիգորյանին, Երան Խաչատրյանին, Անահիտ Աբրահամյանին, Տաթև Խաչատրյանին, Ամալյա Սողոմոնյանին, Դիանա Միրզոյանին։



ՄԱՐԿԱՆԻՆԻ ՄԱՐԿԱՆԻՆԻ ՄԱՐԿԱՆԻՆԻ ՄԱՐԿԱՆԻՆԻ ՄԱՐԿԱՆԻՆԻ

ԿՅԱՆՔՆ ԱՌԱՆՑ ԱՍՏԾՈ ՄԻՐՈ՝ ԴԺՈՒՑ Է

ԱՆԱՋԱՆԳ ԵՆ ՆԼՁԵՑՆՈՒՄ ՄԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԻՆ ԿՏԱՆԳ Է ՍՊԱՌՆՈՒՄ

Արարատյան հարթավայրը հանրապետության միակ տարածք ն է, որն ունի կլիմայկան լավագույն պայմաններ, կանոնավոր ոռոգման դեպքում ստացվում է գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր քերք։ Սկսած խորհրդային տարիներից մինչև հողերի սեփականաշնորհումը կառավարության ուշադրության կենտրոնում են եղել Արարատյան հարթավայրի հողերի (Արարատի, Արմավիրի մարզեր) պահպանումը ճահճացումից, գերխոնավությունից, երկրորդային աղակաման երևույթներից զերծ պահելու եւ գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն բերքատվությունը ապահովելու նպատակով։

Ըստ Նախկին «Հայպետհողշիննախագիծ» ինստիտուտի ճշտված տվյալների (1997թ.) Արարատյան հարթավայրի մշակելի հողերը, որոնք ընկած են Արտաշատի, Հոկտեմբերյանի եւ Ստոիրն Հրազդանի ջրանցքների տակ, տնամերձ հողերի հետ միասին կազմել են 82 հազար հեկտար, որտեղ ամբողջությամբ մշակվել են գյուղատնտեսական արժեքավոր մշկաբույսեր, երբեւէ ոռոգման ջրի պակաս չեն ունեցել եւ ստացվել է գյուղատնտեսական մշակաբույսերի բարձր քերք, երբեմն կրկնակի։ Արարատյան հարթավայրի հողերի ագրոտեխնիկան միշտ տարբերվել է հանրապետության լեռնային եւ նախալեռնային գոտու հողերի ագրոտեխնիկական միջոցառումներից։ Այստեղ, եթե վարելահողերի խորքային ջրերը անվում են 3,0 մ խորությունից բարձր եւ բույսը ունի ջրի պահանջ, անմիջապես անհրաժեշտ է ոռոգել սահմանված նորմաներով, որպեսզի ամռան կիզի ճառագայթների տակ (400-600) կանխվի խորքային ջրերի վեր բարձրանալը, որոնք իրենց հետ կարող են բերել բույսերի համար վնասակար լուծված աղեր եւ առաջացնել երկրորդային աղակաման երևույթներ։ Եթե խորքային ջրերը խոր են 3 մետրից, այստեղ նույնպես պետք է ժամանակին ոռոգել, հակառակ դեպքում հողի մակերեսը կեղեակալում է, բույսը չի կարող շնչել թռշուռ եւ չորանում է։

Չպետք է կարծել, որ խորհրդային իշխանությունը ստեղծման օրից այս հողերը պատրաստի նվեր ստացավ եւ դրեց խաղողի, ծիրանի մշակման տակ։ Այդ տարիներին մեզ բաժին էին ընկել մի քանի հազար հեկտար հողերի հետ միասին ճահճացած գերխոնավացած, ջրերի տակ ընկած գերխոնավ հողեր, որտեղ մշակվում էր նաև բրինձ, ավելեւ այլ ջրադիմացկուն մշակաբույսեր։ Արարատյան հարթավայրի հողերի ընդարձակման եւ ինտենսիվ մշակման համար կառավարությունը որոշում ընդունեց անհապաղ զբաղվելու հողերի չորացման, ճահիճների վերացման աշխատանքներով, բարելավելու հողերի մելիորատիվ վիճակը, հանրապետության աղքատ բնակչությանը գյուղատնտեսական մթերքով ապահովելու համար։ Հետագա տարիներին Արարատյան հարթավայրի հողերը կանոնավոր ոռոգելու և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը բարձրացնելու նպատակով, կառուցվեցին վերը նշված Արտաշատի, Հոկտեմբերյանի եւ Ստորին Հրազդանի խոշոր ջրանցքները։ Կառավարության ուշադրության կենտրոնում է եղել նաեւ լավագույն հողերի երկրորդային աղակաման դեմ այլքար։ Դրա վառ ապացույցն էր խորքային վնասակար ջրերի հեռացումը (Արարատի, Արմավիրի մարզեր) 3,0 մետր խորությամբ, փակ եւ բաց դրենաժային ցանցերի կառուցումը եւ ընդունող կոլեկտորի մաքրումը 3.5 մետր խորությամբ, որը ձգվում

է վնասակար ջրերը ընդունող Արաքս գետը։ Նշված դրենժային ցանցի (ցամաքեցուցիչների) ընդհանուր տարածությունը կազմել է 1200 հա, որոնք այսօր էլ գործում են մաքրված կամ կիսամաքրված վիճակում։ Արարտյան հարթավայրի լավագույն հղերի մեջ կային նաև արուտ-ալկլի անմշակ հողեր շուրջ 25 000 հա, որոնք սկսվում են Կաղարշապատի տարածաշրջանի Գայի անվան տնտեսության սահմաններից, Արաքս գետի ձախ ափով ձգվում են Արմավիրի, Մասիսի, Արտաշատի տարածաշրջաններով մինչև Արագայան, որոնք քարազուրկ են, հարթ միայն աղերի մեծ տոկոսն է խանգառւմ հողերի մշակմանը։ Աղուտ–ալկալի հողերի մեծ զանգվածների աղազերծումը եւ այլքարը հողերի երկրորդային աղակաման դեմ նույնպես եղել են կառավարությանը հուզող հարցերից։ 1958-1959 թվականների ընթացքում կառավարության կողմից հանձնարարվեց համապատասխան գիտահետազոտական ինստիտուտներին (հողագիտության եւ ագրոքիմիայի, անօրգանական քիմիայի, ջրային պրոբլեմների) ուսումնասիրել եւ գտնել այն լավագույն մեխիորանոը, որը կարճ ժամանակահատվածում աղազերծման ճանապարհով կարող է բարելավել աղուտ-ալկալի հողերի մելիորատիվ վիճակը, դրանք գյուղատնտեսական շրջանառության մեջ դնելու նպատակով։

Առաջարկը երկար սպասեցնել չտվեց, հողագիտության եւ ագրոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտը մի շարք թթուների փորձարկումից հետո կանգ առավ ծծմբական թթվի թափոնների 1.0 %-անոց լուծույթի վրա։ Անօրգանական քիմիայի գիտահետազոտական ինստիտուտն առաջարկեց ծծմբային թթվի 0.7-1.0 %-անոց լուծույթով աղազերծում, որը պետք է ստացվեր դաշտային պայմաններում ծծմբի այրումից։ Ջրային պրոբլեմների գիտահետազոտական ինստիտուտն առաջարկեց բույսերի համար վնասակար լուծված աղերի հեռացումը կազմակերպել ոռոգման ջրով վալու միջոցով։ Արդյունքում լավագույնը հանդիսացավ ծծմբական թթվի 1.0 %-անոց տարբերակը։

Ծծմբաթթվի 1.0%-անոց թափոններով հողերի աղազերծման աշխատանքներին զուգահեռ փորձարկվում է նաև հանքարդյունաբերության թափոն հանդիսացող երկաթարջասպը։ Առաջարկված երկու մեթոդը հաստատվում է կառավարության կողմից, որի բազայի վրա ստեղծվում է մասնագիտական մելիորատիվ տրեստ, արուտ-ալկալի հողերի աղազերծման աշխատանքները կատարելու համար։ 1960 թվականից սկսվում են դարերի ընթացքում չմշակվող աղուտ-ալկալի հողերի աղազերծման աշխատանքները, որոնք հավանության են արժանանում նաեւ արտասահմանյան մասնագետների կողմից։

Հետագա տարիներին հանրապետություն էին ժամանում արտասահմանյան մի շարք երկրներից տասնյակ մասնագետներ, փորձը ուսումնասիրելու, ներդնելու նպատակով։ Նման ժամանակահատվածում Արարատյան հարթավայրի հինգ նախկին շրջաններում աղազերծվեցին եւ տնտեսություններին հանձնվեցին 3663.1 հեկտար աղազերծված բարելավված հողեր, որոնք սկզբնական շրջանում դրվեցին հացահատիկի և առվույտի մշակության տակ, հողի ֆիզիկական հատկությունների բարելավման նպատակով։ Արմավիրի տարածաշրջանը ստացավ 2185.1 հեկտար, որտեղ ստեղծվեց նաեւ Արտաշարի մելիորատոր եւ միջտնտեսային խորհուրդ տնտեսությունները,

Կաղարշապատի շրջանում աղազերծվեց 614.0 հա, Մասիսի շրջանում 296.0 հա, Արտաշատի շրջանում 127.0 հա, Արարատի շրջանում 441.0 հա։ Մեկ հեկտար հողի աղազերծման աշխատանքների վրա ծախսվել է 10-12 հազար դոլլար։ 1987 թվականից Գորբաշովյան տարիներին դադարեցվեցին Արարատյան հարթավայրի հողերի աղազերծման աշխատանքները։

1991 թվականի հողերի սեփականաշնորհումից հետո, Արարատյան հարթավայրի խոշոր (5-10 հա) հողակտորները մասնատվեցին եւ վերածվեցին 0.3-0.5 հեկտարանոց հողակտորների, յուրաքանչյուր ընտանիքին հատկացնելով 0.2-0.3 հա վարելահող, 0.1-0.2 հա բազմամյա տնկարկ։ Այսպիսով ամբողջ հարթավայրում հայտնվեց 120-140 հազար սեփականատեր։ Եթե նույնիսկ ամբողջ սեփականատերերի 10-15 %-ը չմշակի, պատկերացրեք ինչպիսի վնաս է կրում մեր հանրապետությունը։ Այն դեպքում, երբ Արարատյան հարթավայրի մեկ հեկտար հողակտորը նորմալ մշակման եւ ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման դեպքում կարող է ապահովել 700-1000g լոլիկի, 400-500 ցնտներ պղպեղի, սմբուկի, ձմերուկի կայուն բերք։ Հացահատիկի բերքը Արարատյան հարթավայրում կազմում է 60-80 g մեկ հեկտարից, իսկ խաղողի բերքը՝ 180-200 g:

Եկեք այս բոլորը անտեսենք եւ վարելահողերի մի մասը դնենք ձկնաբուծության տակ, որը Արարատյան հարթավայրում կազմում է շուրջ 20 ձկնաբուծական, եւ պարծենանք, որ ծով չունենք տոննաերով ձուկ ունենք։ Պետք էՆշել, որ Արարատյան հարթավայրը հանդիսանում է մեր հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերի շտեմարանը։ Հանրապետության գինու, կոնյակի, պահածոների հումքի մեծ մասը (80%) ստացվում է միայն եւ միայն Արարատյան հարթավայրի հողերից։ Ըստ վիճակագրական վարչության վերջին տարիների տվյալների, այսօր Արարատյան հարթավայրի մշակելի հողերը տնամերձի հետ միասին կազմում են շուրջ 62 հազար հեկտար։ Մինչ հողերի սեփականաշնորհումը գյուղատնտեսական նախարարությունը ներհողշինարարական գլխավոր վարչություն եւ յուրաքանչյուր տարվա նոյեմբերին բոլոր շրջաններից պահանջվում էր ըստ համայնքների հողերի փոխակերպումը, որը պետք է համապատասխաներ կառավարության որոշումներին։ Այսօր ձկնաբուծական լճակները բացի այն, որ վատթարացնում են իրենց շրջակայքի վարելահողերի եւ այգիների ֆիզիկական հատկությունները, վերացնում են նաև դարերի ընթացքում կուտակված ստորերկրա մաքուր խմելու և ոռոգելի ջրերը, որոնք գտնվում են 80-120 մ խորության վրա։ Արդյունքում չորացել է Այրդ լճից սկիզբ առնող Սեւ ջուր գետը, որը ոռոգում էր իր շրջակայքի հողերը։ Չորացման եզրին է նաև Այրդ լիճը։ Նշված խորքային ջրերը, որոնք մոտավոր հաշվարկներով կազմում են, շուրջ 800 մլն խորանարդ մետր քաղցրահամ ջուր, ինչ էլ բացասական ազդեցություն է թողնում ստորերկրյա ջրերի ավազանի մակարդակի և ճնշման վրա, Արաքս գետի միջոցով թափվում են Կասպից ծով անապատի վերածելով ամբողջ հարթվայրը։

>

5

ՏԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՏԵՐ՝ ԱԾԽԱՐՀԻՍ

ԱՌԻԿ

ՀՀ ՏԱԿԱՐԱՐՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ ԵՒ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐՈՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Տավարաբուծությունը հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղերից է։ Այն վարվում է բոլոր մարզերում՝ ներառելով գյուղական համայնքների ավելի քան 99 %-ը, տավարաբուծությամբ Վբաղվող շուրջ 200 հազար գյուղացիական տնտեսություն, այլ տնտեսվարողներ ե նպաստում է բնատնտեսական ռեսուրսների նպատակամետ օգտագործման, կենդանական մթերքով բնակչության պարենային պաշտպանվածության խնդիրը լուծելուն, գյուղի սոցիալ-տնտեսական վարգացման նախապայմաններն ապահովելուն։

Ավնհայտ է, որ մեր հանրապետության հողային տարածքների 50 եւ ավելի տոկոսը բնական կերահանդակներն են, որոնք օգտագործվում են տավարի ու ոչխարի միջոցով, հետեաբար տավարաբուծության բարելավման խնդիրը կենսական նշանակույթուն ունի գյուղի բնակչության համար։

Շուրջ 25 տարի ընդհատված է տոհմային աշխատանքների վերականգնումն ու նախիրների որակական վերարտադրությունը։ Անորաժեշտ է հատկապես սեղմ ժամկետներում ներդնել կովերի արհեստական սերմավորման մեթոդը, բացառել անհայտ ծագմամբ ցուլերի օգտագործումը։ Ստեղծված իրավիճակի կարգավորումը պահանջում է ներկրված ցեղերի օգտագործման արտադրատեխնոլոգիական խնդիրների լուծումը։ Ներկրված կենդանիներից ստացված ցուլիկները պետք է աճեցվեն արտադրողների կապմբ համալրելու համար։ Խրախուսել հյուրթալի կերերի արտադրության կապմաներայումբ։

Տավարի մսի արտադրությունն աշխարհում 2016 թվականի տվյալներով կապմել է կենդանի վանգվածով 67.9 մլն տոննա, նախատեսված է 2026 թվականին հասցնել 76.3 մլն տոննայի։ Մեկ շնչի հաշվով արտադրվել է 34.1 կգ միս, նախատեսվում է արտադդել 34.6 կգ, մեկ շնչի հաշվով ֆիզիոլոգիական նորման 82 կգ է։ Տավարի միսը ընդհանուր մսի արտադրության բաժնեմասում կապմել է 21.7 եւ նախատեսվում է հասցնել 21.8 %-ի։

Կաթի արտադրությունը 2016-ին կապմել է 876 մլն տոննա, նախատեսված է 2026 թվականին հասցնել 960 մլն-ի։ Մեկ շնչի հաշվով աշխարհում 2016 թվականին արտադրվել է 111.1 կգ կաթ, ֆիզիոլոգիական նորման կապմում է 415 կգ։ 2018 թվականին աշխարհում 100 կգ կաթի միջին արժեքը կապմել է 35-37 ԱՄՆ դոլար։

Հայաստանի Հանրապետությունում մեկ կովի միջին կաթնատվությունը 2013 թվականի 2054 կգ-ից 2017 թվականին հասել է 2260 կգ-ի։ 2017 թվականին Հայաստանի Հանրապետությունում արտադրվել է միս սպանդային վանգվածով՝ 109.0, կաթ՝ 758.2 հազար տոննա։ Բերված տվյալները խոսում են Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության վարգացումն առաջնային խնդիր դարձնելու մասին։ Խնդրի լուծման համար հարկավոր է Հայաստանի Հանրապետությունում 2007-2015 թվականների տավարաբուծության վարգացման ծրագրի՝ շրջանակներում եւրոպական երկրներից ներկրված գենետիկական ռեսուրս հանդիսացող շվից, հոլշտին եւ ֆլեկլիի ցեղերի մաքրացելը երինքների դատրերից ստացված 2-րդ սերնդի կենդանիներն օգտագործել տավարաբուծության կատարելագործման համար։

Ուսումնասիրությունները կատարվել են 2017-2018 թվականներին ՀՀ Կոտայքի մարզի ՝Արվնու տոհմային ԹՏԻ՝ ԲԲԸ-ի տնտեսությունում։ Այդ նպատակի համար ընտրվել են 16 գլուխ առաջնածին, 20 գլուխ երկրորդ ծնի եւ 22 գլուխ երրորդ ծնի

կովեր։ Կաթնային մթերատվության տվյալները մշակվել են կենսաչափական մեթոդով։ Առաջնածին կովերի լակտացիայի 305 օրվա կերաբաժնի միջին սննդարարությունը կապմել է 12.1 կերի միավոր, 14.6 ՄՋ էներգետիկ կերի միավոր, 146 ՄՋ փոխանակային էներգիա, 1210 գ մարսելի պրոտեին, երկրորդ ծնի կովերինը համապատասխանաբար՝ 14.1, 17, 170, 1410 գ եւ 3-րդ ծնի կովերինը՝ 15.6, 18.6, 186, 1560։ Կովերին տրվել է կերաբաժնի ընդհանուր սննդարարության մեջ 25 % առվույտի խոտ, 5 % ծղոտ, 30 % եգիպտացորենի սիլոս, 7 % արոտի կանաչ, 33 % համակցված կեր։

Կովերի կաթնային մթերատվության վրա ազդում են գենետիկական (ժառանգական) եւ ոչ գենետիկական (ոչ ժառանգական) գործոնները։ Գենետիկական գործոններից են կենդանիների ցեղը, ցեղայնությունը եւ գենոտիպով պայմանավորված անհատական առանձնահատկությունները։ Ոչ գենետիկական գործոնները պայմանավորված են կենդանիների ֆիզիոլոգիական վիճակով եւ արտաքին միջավայրով։ Ֆիզիոլոգիական գործոններից են կենդանիների տարիքը, այդ թվում՝ առաջին ծնի տարիքը, հղիությունը, սերվիսի եւ ցամաքի շրջանների տետղությունը, սեռական ցանկությունը (կտողացը)։ Արտաքին միջավայրի կարեւոր գործոններն են՝ կենդանիների կերակրման մակարդակը եւ տիպը, պահվածքը, խնամքը, ծնի սեպոնը, կթի տեխնոլոգիան եւ այլն։

Աղյուսակ 1		
Հոլշտին ցեղի կովերի կենդանի վանգվածը՝ ըստ լակտացիաների (կգ)		
Ծինը Ցուցանիշները	n	M
1-ին ծին	16	631.5
2-րդ ծին	20	678.7
3-րդ ծին	22	683.1

Աղյուսակ 1-ում ներկայացված են կովերի կենդանի վանգվածի տվյալները։ Տվյալների վերլուծությունից երեւում է, որ առաջին ծնի կովերը ցեղի ստանդարտի 1-ին դասի պահանջը գերապանցում են 151.5 կգ-ով կամ 31.6 %-ով, երկրորդ եւ երրորդ ծների կովերը համապատասխանաբար՝ 158.7, 30.5 և 133.1, 24.2։ Կենդանի վանգվածի տարիքային փոփոխությունը են օրինաչափ է եւ վկայում է այն մասին, որ Նորագույն տեխնոլոգիայով աճեցնելու դեպքում Նորոգման մատղաշը լիովին կլիմայավարժեցվում է, կովերն ապահովում են ցեղին բնորոշ կենդանի վանգված եւ դրսեւորում լավագույն ժառանգական հատկանիշներ։ Հոլշտին ցեղի կովերի տարբեր լակտացիաների կաթնային մթերատվության տվյալները բերված են աղյուսակ 2-ում։ Տվյալների վերլուծությունից ակնհայտ է կաթի քանակի փոփոխության տարիքային առանձնահատկությունը՝ ամենաբարձր կիթը՝ 6112 կգ ցուցաբերել են երրորդ ծնի կովերը, որոնք երկրորդ ծնի կովերին գերապանցում են 706 կգ-ով կամ 13.0 %-ով, իսկ կովերին գերապանցում են 1749 կգ-ով կամ 40.1 %-ով։ Կաթում պարունակվող յուղի եւ սպիտակուցի քանակների տարիքային առանձնահատկությունը օրինաչափ է եւ հոլշտին ցեղի կովերը ցուցաբերել են յուղի պարունակության լավագույն ցուցանիշ 3.97-4.03 %, իսկ սպիտակուցի քանակը տատանվում է 3.2-3.24 %։ Կաթնայուղ+կաթնասպիտակուց քանակով երրորդ ծնի կովերը գերապանցում են առաջնածիններին 128.4 կգ-ով կամ 40.9 %-ով։ Երկրորդ եւ երրորդ լակտացիաներում կաթնայուղ+կաթնասպիտակուց քանակի փոփոխականության գործակիցը, որը տատանվում է9.32-10.8 %-ի սահմաններում, խոսում է

այդ հատկանիշով ընտրության լայն հնարավորության մասին։

ՀՀ Կոտայքի մարզի ՝Արվնու տոհմային ԹՏԻ՝ ԲԲԸ-ի տնտեսությունում Գերմանիայից ներկրված հոլշտին ցեղի երինքների դատրերից ծնված եւ նպատակային աճեցված մաքրացել երկրորդ սերնդի կովերը արոտամտւրային պահվածքի պայմաններում 3-րդ ծնում 305 օրվա կաթի քանակով գերապանցել են ցեղի ստանդարտի պահանջը 1112 կգ-ով կամ 22.2 %-ով, որը վկայում է տվյալ կենդանիների բավարար կլիմայավարժեցման, ինչպես նաև Նորագույն տեխնոլոգիայով նախրի Նորոգման համար ընտրված մատղաշի աճեցման մասին։

Որն է կենդանիների բարձր մթերատվության գաղտնիքը, հարցի պատասխանը շատ պարզ է. հանրապետությունում ներդնել բարձրակիթ կովերի աճեցման Նորագույն տեխնոլոգիա, աճեցվող երնջացուների առաջին բեղմնավորման տարիքը 18 ամսական եւ կենդանի վանգվածը կապմում է 450-460 կգ։ Այս տարի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Բալաիովիտի ՈՒՓՏ-ում Նորածին էգ հորթերից ընտրվել եւ կերակրվում են հատուկ համակցված կերով։ Հարկ է նշել, որ ԱՎՓ-ի 1 լիտրի արժեքը կապմում է 80 դրամ։ Նշված մեթոդով հորթերի կերակրման տեխնոլոգիան մանրամասն չարադրված է Գ. Գիլոյան եւ ուրիշներ ՝կենդանիների աճը եւ վարգացումը՝ ուսումնական ձեռնարկում։ Մեթոդի ներդրումը կնպաստի անարատ կաթի քանակի ավելացմանը։

Աղյուսակ 2
Հոլշտին ցեղի կովերի կաթնային մթերատվությունը՝ ըստ լակտացիաների

Ծինը Ցուցանիշները	n	M
Լակտացիայի 305 օրվա կիթը, կգ		
1-ին ծին	16	4363
2-րդ ծին	20	5406
3-րդ ծին	22	6112
Կաթում յուղի պարունակությունը, %		
1-ին ծին	16	3.97
2-րդ ծին	20	4.03
3-րդ ծին	22	4.0
Կաթում սպիտակուցի պարունակությունը, %		
1-ին ծին	16	3.22
2-րդ ծին	20	3.2
3-րդ ծին	22	3.24
Կաթնայուղը, կգ		
1-ին ծին	16	173.2
2-րդ ծին	20	217.9
3-րդ ծին	22	244.4
Կաթնասպիտակուցը, կգ		
1-ին ծին	16	140.7
2-րդ ծին	20	173.4
3-րդ ծին	22	197.7
Կաթնայուղ+կաթնասպիտակուցը, կգ		
1-ին ծին	16	313.8
2-րդ ծին	20	391.1
3-րդ ծին	22	442.2

Գ.Հ. Գիլոյան
Հայաստանի ազգային ագրարային համալսարան Ն.Ա. Կասումյան
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀՈՂ Է

TOPAS

ՀԱԱՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՎԵՑԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ



«Ագրարային ուսուցման ոլորտում տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության»TOPAS էրազմուս+ Հ92 ծրագրի շրջանակում փետրվարի 13-26-ըԳերմանիայումվերապատրաստվեց գործընկեր երկրների՝ Հայաստանի, Ուկրաինայի և Ուզբեկստանի տասներկու դասախոս։

Հայաստանի ազգային ագրարային համալսարանից «Ֆերմերային տնտեսությունների տվյալների հավաքագրում, կառավարում եւ կիրառում» խորագրով վերապատրաստման ծրագրին մասնակցել են Ֆինանսաիաշխմային ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեմկնածու Արման Տոնիկյանը եւ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի մասնագետ Նարինե Գասպարյանը։

Վերապատրաստման դասընթացն սկսվել է Գյուղատնտեսական տեխնիկայի եւ կառուցվածքների ասոցիացիայում (KTBL), որտեղ ներկաներն ուսումնասիրել են կայուն զարգացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման, մշակման, կառավարման եւ օգտագործման գործընթացը՝ համեմատելով գերմանական մեթոդաբանությունն ու գործիքակազմը տեղական փորձի հետ. երիտասարդ դասախոսները պատմում են, որ իրենք նախապես պատրաստել էին տեղեկատվական պաստառներ, որտեղ ներկայացված էր տվյալների հավաքագրման

գործընթացը։

„Տեսական գիտելիքները գործնական հմտությունների վերածելու նպատակով այցելեցինք ֆերմերային տնտեսւթյուն եւ տեղում հետեւելով գյուղատնտեսական մեքենաների շահագործման եւ կենդանիների բուժման ընթացքին՝ հավաքագրեցինք մեզ անհրաժեշտ տվյալները, որոնց հիման վրա ավելի ուշ Վայինշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանում (HSWT) «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի եւ «TOPAS» ծրագրի համակարգող դոկտոր, պրոֆեսոր Ռաֆ Հլաուերերի անմիջական օգնությամբ կատարեցինք արդյունավետության գնահատման հաշվարկներ «MAX» ծրագրով»,-ՀԱՄԿԻ., հետ զրույցի ընթացքում ասացին ՀԱԱՀ դասախոսները։ Կարեւորելով հեռահար ուսուցումը՝ TOPAS-ի շրջանակում աշխանացան ցորենի հաշվարկային օրինակով HSWT-ի գիտաշխատող դոկտոր Արամ Արիստակեսյանի աջակցությամբ եւ գործընկեր երկրների համալսարանների դասախոսների մասնակցությամբ նկարահանվել են ուսուցողական տեսախոթեր Ձանգվածային բաց առջանց դասընթացների (MOOC) ձեռաչափով։ Աշխատանքային ծրագիրն ավարտվել է դոկտոր Հայնս-Պիտեր Վոլֆի դասախոսությամբ։ Նա ներկայացրել է տվյալների բազայի ստեղծման եւ կառավարման

հարցերի լուծումը հրատապ է եւ պետք է տեղյակ պահել Նոր կառավարության ղեկավարությանը միջոցներ

ԱՆԱԶԱՆԳ ԵՆ ՆՆԳԵՑՆՈՒՄ ՄԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ

Կարծրեղ լուծումը հրատապ է եւ պետք է տեղյակ պահել Նոր կառավարության ղեկավարությանը միջոցներ ձեռնարկելու համար։ Ամփոփելով հանրապետության ջրային ռեսուրսների եւ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ կառավարման հիմնարար խնդիրները, գտնում ենք, որ հատկապես ոռոգման բնագավառում ծառացած հիմնահարցերը հնարավոր է լուծել մեր հասարակության տարբեր շերտերի համագործակցության արդյունքում։ Մասնավորապես ոռոգման խնդիրների բնագավառում անհրաժեշտ է ներգրավել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի բարձր որակավորում ունեցող, միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետներին, որոնք իրենց գիտամակկավարժական գործունեությունը ծավալել են և ներկայումս էլ աշխատում են այս համակարգի հետագա արդյունավետության բարձրացման ուղղությամբ։ Շատերին թվում է, թե ոռոգումը դա բույսերին ջուր տալու միայն ֆիզիկական գործընթաց է։

Իրականում բազմափուկցինոսա, բազմաթիվ կապերով հարցերի լուծումը հրատապ է եւ պետք է տեղյակ պահել Նոր կառավարության ղեկավարությանը միջոցներ ձեռնարկելու համար։ Ամփոփելով հանրապետության ջրային ռեսուրսների եւ գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ կառավարման հիմնարար խնդիրները, գտնում ենք, որ հատկապես ոռոգման բնագավառում ծառացած հիմնահարցերը հնարավոր է լուծել մեր հասարակության տարբեր շերտերի համագործակցության արդյունքում։ Մասնավորապես ոռոգման խնդիրների բնագավառում անհրաժեշտ է ներգրավել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի բարձր որակավորում ունեցող, միջազգային չափանիշներին համապատասխան մասնագետներին, որոնք իրենց գիտամակկավարժական գործունեությունը ծավալել են և ներկայումս էլ աշխատում են այս համակարգի հետագա արդյունավետության բարձրացման ուղղությամբ։ Շատերին թվում է, թե ոռոգումը դա բույսերին ջուր տալու միայն ֆիզիկական գործընթաց է։ Իրականում բազմափուկցինոսա, բազմաթիվ կապերով

հիմնական մոտեցումները, մարտահրավերներն ու զարգացման հեռանկարները։

Պետք է նշել, որ վերապատրաստման ծրագրին անդրադարձել է Նաեե գերմանական Fränkische Landeszeitung թերթը, որին հարցազրույց է տվել ՀԱԱՀ դասախոս Արման Տոնիկյանը՝ կարեւորելով TOPAS-ի շրջանակում հեռանկարային համագործակցությունը եւ գերմանական փորձի կիրառումը ՀԱԱՀ ուսումնական գործընթացում, մասնավորապես՝ ուսանողների պրակտիկայի կազմակերպման հարցում։ Երկշաբաթյա վերապատրաստման ծրագրով նախատեսված են եղել Նաեե մշակութային շրջայցեր դեպի պատմական քաղաքներ Կյուրցբուրգ, Ռոթենբուրգ եւ Նյուրնբերգ. «Էքսկուրսիայի ընթացքում հատկապես տպավորվեցինք եւ ոգետրության զգացողություններ ապրեցինք Կյուրցբուրգի արքեպիսկոպոսական Նստավայրում, որի կենտրոնական մուտքի առաստաղի վրա տարածվում է իտալացի նկարիչ Ջովաննի Բատիստա Տինպուրոյի՝ աշխարհի պատմությունը ներկայացնող որմնանկարը, որտեղ երեւում են Նաեե սալաքարի վրա փորագրված հայկական տառերը»,- պատմում են մեր երիտասարդ գործընկերները։ ՀԱԱՀ դասախոսներն այցի ընթացքում հանդիպել են Նաև HSWT-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի հայ ուսանողների հետ։

ԶՈՒՍՊ, ԽՍՏԱՊԱՀԱՆՋ, ԲԱՅՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԵԼՏՐՈՆ



Սյսյան բնորոշեց ՀԱԱՀ այգեպտղաբուծության հավաքվածքի 64 տարվա ճեղքանակի անհամահունչ Ծախսյանին դուրսերը՝ Ռուգանանին։ Այս տարի հունվարին լրացավ կրթության եւ գիտության երախտավորի, իր մասնագիտության շատագով-նվիրյալի 90-ամյակը։ Սաները լավ են հիշում բարձրախառակ, չորուկ, խիստ, բայց ուսանողներին հուզեցրին ականջալուր եղեմներին։ Նրանք շատ լավ գիտեին, եթե դեկանը ներկա է, ուրեմն ոչ մի անարդարացի բան չի կարող իրենց հետ պատահել։

-Չորս արմատները Բզդիրում եւ Պարսում են, որոնք էլ նրա բնութագիրը կերտեցին՝ համա՛մ, խստապահի՛մ, տոկո՛ս, զուպ՛ալ եր թուր խոցի՛նքում, այդ բժվո՛ւմ սնվելիս։ Կնամե՜ծար եր, բայց ոչ երբեք կնամո՛ւ։

Մտնողով թիֆլիսցի կնոնը՝ Ամպա Կարապետի Հովհաննեսով։ Պարմատուհին անկրկնելի ծայր ունեւ, պարուն էր Նրազանքով եւ անկարելի եր ծիպվել։ Հմայվել երիտասարդ Հովհաննեսը։ Հմայվել միանգամից։ Ցկայա... Ամպան իսկական տանտիրիկն էր՝ համո՛ղ

խիստանցով, հյուրընկալ, սրտաբաց, անմասնորդ նվիրված ընտանիքին:

Ռուզաննան մասնագիտությունը ընտրեց մորը հետեւելով: Ամալյա Կարպովան ռուսերենի լավագույն մասնագետներից էր, դասավանդում էր Գոգոյի անվան դպրոցում: Ղուստուր Բոլոտովի անվան լեզվագիտական համալսարանում սովորելիս ընտրեց նվագիտելը: Իսկ աշխատանքի անցավ հոր հաքազատ բուհում, սիրեց այս միջավայրն ու աշխատում է մեծ նվիրումով, հոր օրինակի չխախտելով: Ստեղծման տիպը ղեկավարում է լեզվի կենտրոնը:

-Բուհն ավարտելուց հետո մի կարճ ժամանակ աշխատեցի գրադարանում, բայց միայապարհ, գրեթե մեխանիկական գործը բոլորովին չէր համապատասխանում իմ հավակնություններին, պատկերասրահում էր: Ջանն տարելան էի, որ գլոտիստսոլիտներում ժամավճարով աշխատանքի ընդունեցին, 23-ից լաբորանտ դարձա...

Հայրը հենց սկզբից շատ խիստ դրեց արգելքներ՝ «տարբեր», որոնք պետք է պահվեին արդեն: Տանը

երբեք չի կարելի խոսել աշխատավայրի անցուդարձից: Բուհում երբեք չի կարելի տաքատ հագնել: Ըստասիլքում ընդունված չէր խոսել փողի եւ սննդի մասին: Որկառնությունը պակասարկվում էր: Տանել չէր կարողանում բամբասանքը:

Մեր ողջ գրույցի ընթացքում Բուզանսիայի աչքերը խտնվա էին, բայց չգտնում էր, սիրելիների մասին հիշողությունները տաք-ջերմ փայլ էին հարդրելու դեմքին...

Է.Գ. Ընտանեկան ավանդույթների շարունակականության մասին խոսելիս շեշտեմք անպատճառ, որ Հովհաննես Շահինյանի թոռնուհին՝ Սիվիլան, եւ ընտրող ագրարային ոլորտը ու աշխատում է նույն՝ շահինյանական նվիրումով, սիրով: Նույն, անշփոթելի ձեռագրով...Հակավայրիադու նա ավարտող ագրոէկոլոգիա մասնագիտացմամբ, իսկ հետո՝ հմտացավ գյուղատնտեսության կայուն զարգացման հիմնահարցերի ասպարեզում: Այսօր նա EVN գինու ակադեմիայի պրոգնոզ մենեջերն է:

ԳԻՏԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

**ՊԵՍՏԻՑԻԴՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ**

ՀԱԱՀ-ի պետօրհոգիների միջնեզի եւ բոյսերի պաշտպանութեան հետազոտական կենտրոնը միակն է ՀՀ-ում, որը մասնագիտանում եւ բոյսերի պաշտպանութեան քիմիական միջոցների մշակման ուղղութեամբ՝ ազոտ, ծծումբ եւ թթվածին պարունակող հետերոցիկլիկ համակարգերի շարքերում: Հէ տ ա գ ո տ ա կ ն ենտրոնը համալրված է բարձրորակ փորձառու գիտնականներով: Նրանց կողմից իրականացվող գիտական աշխատանքների արդյունքները բազմիցս ներկայացվել են արտերկրներում անցկացվող միջազգային գիտաժողովներում եւ արժանացել 1-

իս, 2-րդ եւ 3-րդ կարգի դիպլոմները:
Վերջին տարվա ընթացքում Ա. Ենգոյանի
դեկլարությունը գիտաշխատողներ Ռ. Շաիրովայի,
Տ. Գոմցյանի, Ա. Կարապետյանի եւ ապաիւրստ
Ժ. Ազարյանի կողմից ներկայացված գիտական
աշխատանքները Պրահայում „ժամանակակից
գիտության խնդիրները, գաղափարները եւ
առաջնությունները“, և Միւսկովում „ժամանակակից
գիտության տեսական եւ գործնական իմունքները“,
միջազգային գիտագործնական գիտահոլովներում
արժանացել են 1-ին կարգի դիպլոմների:



УУРС 2019

ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ

**ԱԳՐՈՆՈՄԻԱԿԱՆ ԱՅՍՈՒՆԵՏ ԹԻՄ Է՝ ԱՄՐԱԿՈՒՌ,
ԲՈՒՆՆՑՔԱԾ**



ՀԱՄԱՀ հիմնարար՝ արգրոնմիական ֆակուլտետի, դեկանի պաշտոնակատար Արմենակ Տեր-Ջրիգորյանի կողմից 20-ին համալիրում ռեզնաց ռաստրների հետ: Նա հենց սկզբից նկատեց. «Ֆակուլտետը թիֆ հետ համարում, եթե ոչ սիրտ, ապա գլուխ: Դեկանտանի Նախկին աշխատակիցների շնորհակալություն եմ հայտնվում տարիների աշխատանքի համար, սակայն կենցաղովու տոբ թիֆ: Եղած հիմքերի վրա կկատենք»:

Մեր ամրոցը,:

Դեկանի պաշտոնակատարը խոստացավ, որ այսուհետ իրենց աշխատանքն ավելի թափանցիկ կլինի, միտակցել կլորոթյան և փոխտեսագրության աշխատանքների որակի բարձրացմանը: Երջափոխման գործընթացը կհաստատվանա ազնվի ու արդար իրականացվելու համար, որոշումներ կկայացեն դեկանը, ֆակուլտետի ու ուսիտիրիոի Նախագահը ու եւս երբեք պատվիրակ- ուսանող: Համալսարանում արդեն ստեղծվել է հանձնաժողով, որը մասնակրկիտ կփոխարկի կրթամացիի տարրկայական ցանկը, արմատապես կբարելավի պրակկիկների արդյունավետությունը:

կլեմասայելեն անցկացման ժամկետները:
Պարոն Տեղ-Գործարարյանը խիստ կարեւորեց
գարգապահական հարցերը՝ Ջուշացոյցն, որ
հետետողական է լինելու քացակալությունների ու
ուշացումների հարցում: Այնուհետեւ ազատ, անկաշակում
նորմատուրայան կոչ արեց: Հաշրեքը հիմնականում
դարձաւ պարսկականների արդունկանետուրայան
քարձիցացման էին նկիրված: Իսկ երրորդ կուրս
նուսանողոյն Ջարոնի, որ Նորվիճեպոյան ուսումնական
պարսկական անցկացնելու հետապնդությունն է
ունեցել, առաջարկեց, որ կենսատեխնոլոգիաների
կարգատորիային հնարավորությունները օգտագործվեն
ուսումնական գործընթացում:
Հ.Գ. Պարոն Տեղ-Գործարարյանը անտառազետ
նուսանողներին տեղեկացրեց, որ երկուշաբթի օրվակից
նրանց կարող են վճարովի աշխատանք կատարել
Երեւանի քաղաքապետարանի կանաչապատման
վարչությունում, որը հրաշալի փորձառության
հնարավորություն է:

ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Զոհվել: Կեղեցես այս նվիրական բառը նույնպես իմաստագրվել է: Մեծած մարդը համամարդում է զոհված, եթե կյանքից զրկվել է հանուն հայրենիքի ազատագրության, հավաստի, այլ մարդկանց կյանքը փրկելու: Այս բառն էլ իմա արժեզրկվել է: Ստում են «ավտոլուքարի հետեանքով երկու մարդ է զոհվել»: Ոչ թե զոհվել այլ մահացել է կամ «սպանվել է» կրակոյի հետեանքով:

Ինչու էքսկլուզիվ եւ ոչ թե՛ բացառիկ:

Մենք ունենք մարզական աշխարհի հետ առնչվող գեղեցիկ բովանդակալից բառեր. ըմբամարտ, սուերամարտ, բռնցքամարտ, ձեռնամարտ: Այս բոլորն այսօր «մոռացվել են» եւ փոխարինվել մի ընդհանուր բառով. «մեամարտ», որը չի մասնավորեցնում քննարկվող մարզաձևեր:

Վերջերս հաճախացել է «տեսլական» բառի օգտագործումը: Արտահայտված մտքերից կարելի է եզրակացնել, որ այդ բառը հիմնականում օգտագործվում է «հեռանկար» մտադրվար բառի փոխարեն: Ինչ կարից կար հայրն համար հարազատ, հասկանալի «հեռանկարը» (պերսպեկտիվ) փոխարինել նոր, թերեւս, անձնաթիւ բառով: Այնուհետեւ, ինչպէս արդեն նշել են նախորդ հրապարակումների մեջ, նախքան մի նորը օգտագործելը անսխառմշտ է այդ բառի հետ «ձանթթանալ»: Այսպէս, ըստ Սիմոն Գաբամանձեանի «Նոր բառագիրք հայերէն լեզուի» (Վ. Պոլիս, 1910, էջ 1291) տեսլական նշանակում է գաղափարական, ըստ Յ. Թ. Գայյաշեանի (Բառարան-Գանձարան հայ լեզուի հոմանիշներու, Գահիրե, 1938, էջ 494) տեսլականի հոմանիշներն են. տեսլապաշտ, գաղափարական, գաղափարապաշտ, մտադրիկաբ: Ըստ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (ԵՊՀ-ի հրատարակչութիւն, Երեւան, 1987, հատոր երկրորդ, էջ 869) «տեսլականակ, տեսական, մասնակալ»:

Օգտվելով այս պատեհ առիթից ցանկանում ենք նշել նաեւ հետեւյալը: Խաճախ Արեւմտյան Աֆրիկայի երկրները հիշատակելիս նշվում է այդ երկրներից մեկը հետեւյալով անվանումով: «Կոտ դ'Իվուար»: Ավելի քան 80 տարեյալ րդ արեւմտահայերն այդ երկրին անվանում են «փղոսկրի ափ» (նշվածի հայերեն թարգմանությունն է):

III-Լեզուն աղավաղում է նաև գրաբար չիմացողը
Նորաձևությունն է դարձել գրաբար դարձվածքներ
օգտագործելը ասածն ավելի «տպավորիչ» դարձնելու
համար, հաճախ թույլ տալով կոպիտ սխալներ: Բերենք
մի քանի «թանգարժեք» նմուշներ:

1. Առանց իմանալու, որ «ընդ»-ը գրաբարում մասնավորապես «հետ» է նշանակում, որոշ մարդիկ սկսեցին «ընդդիմադիր» համարել որպես «դիմադիրի» հակառիշ և առանց մտածելու, Նույնիսկ եղբորն սկսեցին ասել «դիմադիրները և ընդդիմադիրները», երբ ընդդիմադիրն այն մարդն է, որը հիմադիրի «հետ» է։ Բարեբախտաբար վերջերս միայն գտանու կենտ մարդիկ են շարունակում կրկնել այդ անգրագիտությունը։ Սա պետք է լրիվ արմատախիլ արվի։
2. Ի շնորհիվ։ Սխալ է ի-ն օգտագործել։ Պետք է ասել պարզապես «շնորհիվ»։
3. Հրավերը։ Գրաբարում ք-ն հոգնակի է դարձնում բառը։ Խոսքը վերաբերում է հրավերին։ Տվյալ անձը հրավեր է ստացել մասնակցելու ինչ որ մի միջոցառման, ո՞ր թե «հրավեր»։

4. Ըստ ինձ: Ոչ, ըստ իս:

5. Հանձնիս և հանձնիս: Այստեղ քննարկելու հարց կա: Ե) Նախ՝ ինքը վերաբերում է «մարդուն» (անձին): Հաճախ կարելի է լսել «հանձնիսն առկա փաստերի, Նշված թերությունների» և այլն: Անհարմար է փաստը, թերությունը.... Նույնացնել անձի հետ: Զ) «հանձնը» եզակի է. «հանձին» (ոչ թե «հանձնիս») նախադասակի, իսկ «հանձնիսը» հոգնակի է. «հանձնիս ապագադասակի»): Զի կարելի չի ընդել:

գ) «ի»-ն (յ-ն) գրաբարում փոխարինում է «ի»-ն, երբ բառը ձայնավորով է սկսվում: Պետք է ասել ոչ թե «ի օգուտ Հայաստանի...», այլ «իօգուտ Հայաստանի...»:

6. «Մեծամասամբ», ո'չ, մեծավ մասամբ և այլն:

7.Ամբողջ աշխարհում հայը, անկախ այն բանից թե գյուղացի է, բանվոր, պրոֆեսոր, քաղաքական գործիչ օգտագործում է «այն մասին» արտահայտությունը: Այժմ առավել գործածական է դառնում «առ այն», ինչդեռ համար: Ի՞նչ էլ ուզում ցույց տալ: Լավ այլև:

Բնականաբար նման սխալներ թույլ չեն տրվի, եթե մեր դպրոցներում ուսուցանվի մեր լեզվի հիմնաքարը՝ գրաբարը: Այս հարցի մասին մեր սկզբունքային դիրքորոշումն արտահայտել ենք դեռևս 1995-ին «Դպիր» ամսագրում տպված մեր հոդվածում:

ՆՈՐԱՅԻՐ ԲԵՅԼԵՐՅԱՆ

քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր.

**ՀՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ
շարունակությունը կարդացեք 'ՀԱՍԿԻ'
հաջորդ համարներում**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝
ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ**



ՀԱԱՀ-ի պետսիոցիոների սինթեզի եւ բույսերի պաշտպանության հետազոտական կենտրոնը միակն է ՀՀ-ում, որը մասնագիտացված է բույսերի պաշտպանության քիմիական միջոցների մշակման ուղղությամբ՝ ազոտ, ծծմբ եւ թթվածին պարունակող հետերոցիկլիկ համակարգերի շարքերում:

Հետազոտական ենտրոլը համալրված է բարձրորակ փորձառու գիտնականներով: Նրանց կողմից իրականացվող գիտական աշխատանքների արդյունքները բազմիցս ներկայացվել են արտերկրյանում անցկացվող միջազգային կառավարողվներում և արժանացել 1-ին, 2-րդ, եւ 3-րդ կարգի դիպլոմների:

Կերքին տարվա ընթացքում Ա. Ենգոյանի ղեկավարությամբ գիտաշխատողներ՝ Ռ. Շաիրովայի, Տ. Գումկյանի, Ա. Կարապետյանի եւ ասպիրանտ Ժ. Ազարյանի կողմից ներկայացված գիտական աշխատանքները Պրահայում ,ժամանակակից գիտության խնդիրները, գաղափարները եւ առաջընթացը,, և Մինսկում՝ ,ժամանակակից գիտության տեսական եւ գործնական հիմունքները,, միջազգային գիտագործնական գիտաժողովներում արժանացել են 1-ին կարգի դիպլոմների:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏԼԱԿԱՆ և ՄԵԾԱՏԱՌՈՎ ՄԱՐԴ (ՆՎԻՐՎԱԾ Է ՊԱՊԻՆ ԱՐՏԱՇԵՍԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻ 90-ԱՄՅԱԿԻՆ)



«Մարդ լինել մարդկանց մեջ և միշտ մարդ մեալ բոլոր դժվարությունների մեջ, չհուսալքվել ու չընկճվել՝ այս է ահա կյանքը, այս է նրա նպատակը»:

Ֆ. Դոստոևսկի

Ս/թ մարտի 15-ին լրանում է անվանի գիտնական-կենսաբան, բուսաբան, սելեկցիոներ, կենսաբանական գիտությունների դոկտոր (1973), պրոֆեսոր (1974), ՀՀ ԳԳԱ ակադեմիկոս (1994) Պ.Ա. Ղանդիյանի ծննդյան 90-ամյակը:

Պ.Ղանդիյանը ծնվել է Հացառատ գյուղում (Ներկայումս Գավառ քաղաքի շրջակայքում): Գերազանցությամբ ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը, նա իր գործերը հանձնեց Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ ու իր հետագա ամբողջ կյանքը նվիրեց գիտությանն ու գյուղատնտեսությանը և հարազատ բնաշխարհի պահպանմանը: Հայկական գյուղատնտեսական ինստիտուտն ավարտելուց հետո նրա ողջ կյանքը անցավ հարազատ բուհում: Նա իր գործին անմիացորդ նվիրված գիտնական էր և այդ ոգով էլ կրթեց ու դաստիարակեց բազմաթիվ սերունդներ: Շուրջ 40 տարի Պ.Ղանդիյանը համատեղեց մանկավարժական և գիտական գործունեությունը՝ ղեկավարեց Բուսաբանության ամբիոնը (1988-1997) և երկար տարիներ գիտության գծով ՀԳԻ-ի պրոռեկտորն էր (1978-1992):

Պրոֆ. Պ. Ղանդիյանի նախաձեռնությամբ 1981թ. հիմնվեց «Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի պրոբլեմային լաբորատորիան» (Ներկայումս Հետազոտական կենտրոն), որը անընդմեջ ղեկավարեց շուրջ 20 տարի: Յուրաքանչյուր տարի լաբորատորիայի երիտասարդ աշխատակիցների և ասպիրանտների հետ կազմակերպվում էին արշավախմբային հետազոտություններ ՀՀ բոլոր մարզերում, որոնք յուրահատուկ գիտաճանաչողական դասեր էին հարազատ բնության և նրա բուսական աշխարհի մասին: Այդ արշավախմբերից յուրաքանչյուրը նաև հայրենասիրական դասեր էին, պատմական փաստերի և հուշարձանների ճանաչողական այցեր, սեփական երկիրը լավ ճանաչելու դասեր: Հավաքված հսկայական փորձարարական նյութը հիմք հանդիսացավ Հայաստանում մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների առաջին սերմային հավաքածուի (ex situ) ստեղծման համար:

Պ.Ա.Ղանդիյանի հիմնական գիտական նշանակետը հատկապես հացազգի մշակաբույսերի վայրի ազգակիցներն էին (ցորեն, գարի, աշորա, այծակն), որոնց բազմակողմանի ուսումնասիրությամբ նա զբաղվեց իր ողջ կյանքում: Դրանց վերաբերյալ նրա գիտական աշխատությունները հայտնի են ոչ միայն ՀՀ-ում, այլև արտերկրում: Տաղանդաշատ պրոֆեսորը միջազգային մասշտաբով ճանաչված գիտնական էր և նա արդի գիտության մեջ իր խոսքն ասեց՝ հայտնաբերելով և նկարագրելով բնության մեջ տարածված հացաբույսերի մի քանի նոր տեսակներ և բազմաթիվ տարատեսակներ: Նրա բեղմնավոր աշխատանքի շնորհիվ են ստեղծվել հացաբույսերի ավելի քան 20 ամֆիդիպլոիդները, որոնք հանդիսանում են միջանկյալ ելանյութ նոր սորտերի ստացման համար: Նա հասցրեց ստեղծել բազմաթիվ նոր սորտեր, որոնց ծնողական ձևերից մեկը վայրի ազգակից բույսն էր:

Պ.Ա.Ղանդիյանը շուրջ 200 գիտական հոդվածների հեղինակ է: Հրատարակել է «Բուսաբանական մասնագիտական կարգաբանական բառարան»-ը, «Հասկավոր հացաբույսեր», «Ցորենի, այծակնի, աշորայի և գարու որոշից» գիրքը, «Հայաստանի վայրի ուտելի և համեմունքային բանջարաբույսերի գենոֆոնդը» գիտական աշխատությունները: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են բազմաթիվ թեկնածուական և դոկտորական ատենախոսություններ:

Պ.Ղանդիյանը չէր սահմանափակվում միայն գիտական և մանկավարժական գործունեությամբ: Նրան մտահոգում էր Հայաստանի տարածքում աճող, բայց անհետացման եզրին գտնվող բուսատեսակները և նա կարևորում էր Հայաստանի կենսաբազմազանության պահպանությունը: Ապագան կանխատեսող մեծ գիտնականի և իր համախոհ գործընկերների հետևողական ջանքերի շնորհիվ էր, որ 1981թ. Հայաստանում հիմնվեց վայրի ցորենների պահպանման «Էրեբունի» եզակի արգելոցը, որը միակն է աշխարհում, և որտեղ աճում


են ցորենի աշխարհում տարածված վայրի չորս տեսակներից երեքը: Այդ «բաց երկնքի տակ գտնվող թանգարանը» համարվում է ազգային հարստություն և ապահովում է եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, էնդեմիկ տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում:

Պ.Ա.Ղանդիյանի հետաքրքրությունները անդրադառնում էին նաև բուսական ռեսուրսների ուսումնասիրության պատմական, հնագիտական և բանասիրական կողմերին, ինչը արտացոլված է նրա կողմից հրատարակված բազմաթիվ գիտական և հանրամատչելի հոդվածներում:

Սակայն Պ. Ղանդիյանի իրական մեծությունը կայանում էր նրա մարդ լինելու մեջ: Պապին Ղանդիյանն իրապես «մարդ»՝ կոչումը արժևորողն էր: Նա աչքի էր ընկնում իր մեծահոգությամբ, համեստությամբ, պարզ, հասարակ վարվեցողությամբ, մեծ հումորի զգացումով և կոլեկտիվի անդամների նկատմամբ հոգատարությամբ, որի համար էլ վայելում էր իր շրջապատի մեծագույն հարգանքն ու սերը:

Պապին Ղանդիյանը այն շտեմարանն էր, որ մշտապես լեցուն էր մտքի արգասիքով, որից այսօր էլ օգտվում են տարբեր սերունդների գիտնականները, նրա աշակերտներն ու գործի շարունակողները: Մեծ գիտնականի և մանկավարժի՝ Պ.Ա.Ղանդիյանի օրինակը ամենավառ ապացույցն է այն բանի, որ ամենաարժեքավոր հարստությունն ու բնական պաշարը մարդկային միտքն է: Նրա թողած հարուստ գիտական ժառանգության պահպանությունը և գործի շարունակությունը ամենամեծ ու միայուն հարգանքի տուրքն է մեծանուն գիտնականի Պապին Արտաշեսի Ղանդիյանի վաստակին և հիշատակին:

**Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի
հետազոտական կենտրոնի կոլեկտիվ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ**

**3-4
2019**

Լրատվական գործունեություն իրականացնող՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամ, հասցե՝ Տերյան 74 պետոեգիստրի վկայական՝ 273.210.03231, տրված 10.06.2002 թ.

գրանցված է ՀՀ ԱՆ, վկայական 01Մ000153
Խմբագրության հասցեն՝ ՀԱԱՀ, 1-ին մասնաշենք,
4-րդ հարկ e-mail: a_khudaverdyan@mail.ru

խմբագիր, համարի պատասխանատու եւ ձեւավորող՝
ԱՆԻ ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ